ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«14» մարտի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ

_____ Հ. Այունց

ԳԲԽ-26/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև՝ Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 01.03.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1.«Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Լոկատոր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 01.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ Շիրակի մարզի Հովտաշենի գյուղապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպվել է «ՇՄՀԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով

առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Լոկատոր» ՓԲԸ-ն, չնայած նրան, որ հակակարկտային կայաններ արտադրող ընկերություն է, չի մասնակցել Ընթացակարգին, քանի որ Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը, ըստ Ընկերության, համապատասխանեցված է միայն Հայաստանի Հանրապետությունում հակակարկտային կայաններ արտադրող «Բարվա» ՍՊԸ-ի հակակարկտային կայանների տեխնիկական բնութագրին, որով էլ, սահմանափակվել է այլ հակակարկտային կայաններ արտադրող ընկերությունների մասնակցության հնարավորությունը:

Ընկերությունը, որպես բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը.

1. Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է կայանի գազի չափաբաժնի ներարկումը այրման խցիկ, ինչպես նաև այրման խցիկի օդափոխությունը պետք է իրականացվի հատուկ էլեկտրական օդամղիչի միջոցով, այրման խցիկը պետք է չունենա որևէ օդափոխության մեխանիկական փական, բացառելով արտաքին բոցի առաջացում:

Գազի ներարկիչը պետք է կահավորված լինի հատուկ հետադարձ փականով, բոցի հետդարձը գազաբաշխիչ համակարգ բացառելու նպատակով: «Լոկատոր» ՓԲԸ-ն նշել է, որ այդպիսի կայան Հայաստանի Հանրապետությունում արտադրում է միայն «Բարվա» ՍՊԸ-ը:

2. Հակակարկտային կայանի հիմքը պետք է լինի մեկ ամբողջական 240սմ x 180սմ առնվազն 18սմ հաստությամբ երկաթբետոնե սալից, որը պետք է պատրաստված լինի 16մմ հաստությամբ ամրանից հյուսված 20սմ x 20սմ շախմատաձև 2 ցանցով, ցանցերի հեռավորությունը միմյանցից 10սմ, լցոնված B15 դասի բետոնով:

3. Հակակարկտային կայանը պետք է ունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:

4. Հակակարկտային կայանը պետք է ունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:

«Լոկատոր» ՓԲԸ-ն տեղեկացրել է, որ վերը նշված պայմաններին համապատասխանող տեխնիկական բնութագիր ունի միայն Հայաստանի Հանրապետությունում հակակարկտային կայան արտադրող «Բարվա» ՍՊԸ-ն:

Վերը նշված փաստերը, ըստ Ընկերության, վկայում են այն, որ Պատվիրատուն ցանկանում է ձեռք բերել հակակարկտային կայան՝ արտադրված «Բարվա» ՍՊԸ-ի կողմից: Այսինքն, Պատվիրատուն Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջել է միայն «Բարվա» ՍՊԸ-ի կողմից արտադրված Զենիթ տեսակի հակակարկտային կայան:

«Լոկատոր» ՓԲԸ-ն, որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ, նշել է հետևյալը.

Ընթացակարգի հրավերում նշված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում գնումները կարգավորող օրենսդրության պահանջներին, այդպիսի տեխնիկական բնութագրով սահմանափակվում է այլ հնարավոր մասնակիցների մասնակցությունը Ընթացակարգին և որի հետևանքով կարող են խախտվել ինչպես Ընկերության, այնպես էլ ավելի որակյալ հակակարկտային կայան արտադրող այլ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը...»:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագիրը չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, քանի որ Պատվիրատուի կողմից պահանջվել է այնպիսի հակակարտային կայան, որն արտադրում է միայն «Բարվա» ՍՊԸ-ն, այսինքն տեխնիկական բնութագրում Պատվիրատուն սահմանել է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից տրված

տեխնիկական բնութագիրը, որով էլ սահմանափակել է այլ հնարավոր մասնակիցների՝ Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունը: Ընկերությունը, վերը նշվածը, հիմնավորվել է նաև նրանով, որ Պատվիրատուն գնման առարկայի բնութագրով պահանջել է այնպիսի բնութագրիչներ, որոնք կարող են լինել այլ տարբերակով և բավարարեն Պատվիրատուի պահանջները:

Ընկերությունը կարծում է, որ Պատվիրատուն պետք է պահանջեր ոչ թե կոնկրետ անվտանգության համակարգ, այլ այնպիսի համակարգ, որն առհասարակ կբացառի արտաքին բոցի առաջացում, որը կարող է լինել ավելի արդյունավետ ու անվտանգ, որը սակայն, Պատվիրատուն հրավերի տեխնիկական բնութագրով սահմանափակել է և պահանջում է կոնկրետ մեկ տեսակի համակարգ, որին համապատասխանում է միայն մեկ ընկերության տեխնիկական բնութագիրը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից պահանջված փաստաթղթերին, ապա Ընկերությունը նշել է, որ այդ փաստաթղթերը թե «Գնումների մասին» ՀՀ օրենքով և թե գնումների ընթացակարգը կարգավորող այլ իրավական ակտերով Պատվիրատուն նման փաստաթղթեր պահանջելու իրավունք չունի և առհասարակ Հայաստանի Հանրապետությունում նման փաստաթղթեր ոչ մի պետական կամ ոչ պետական հիմնարկ տրամադրելու իրավասություն չունի և չի տրամադրում:

Ընկերությունը 01.03.2017թ. բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. Կասեցնել «ՇՄՀԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի շրջանակներում պայմանագրի կնքման գործընթացը:

2. Պայմանագիր կնքված լինելու դեպքում «ՇՄՀԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը հայտարարել ապօրինի:

2. ՀՀ Շիրակի մարզի Հովտաշենի գյուղապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ Շիրակի մարզի Հովտաշենի գյուղապետարանը ամբողջությամբ առարկել է «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի դեմ և հայտնել է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքաբերը բողոքում նշել է, որ Պատվիրատուի կողմից հայտարարված Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը խտրական է և անօրինական, սակայն, ըստ Պատվիրատուի, Ընկերությունը տեխնիկական բնութագրի բովանդակությունը մեկնաբանել է սուբյեկտիվ:

Պատվիրատուն, հաշվի առնելով բյուջետային միջոցների սղությունը և մեկ անգամ գնելու հնարավորությունը, ցանկավել է հնել որակյալ, մարդկային կյանքի համար անվտանգ, հուսալի և հետագա շահագործման տեսանկետից հարմար կայաններ, միևնույն ժամանակ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրության բոլոր պահանջները:

Պատվիրատուի կողմից չի նշվել է որևէ ֆիրմային անվանում կամ կոնկրետ արտադրողի տվյալներ, Ընթացակարգի պահանջներին համապատասխան առաջարկ ներկայցնելով բոլոր հնարավոր մասնակիցներին:

Անդրադառնալով Ընկերության փաստերին՝ Պատվիրատուն նշել է, որ անտանգության տեսնակյունից շատ կարևոր է գազի պայթյունից առաջացող բոցի իսպառ բացակայությունը կայանների շահագործման ընթացքում, որը կկախի չոր խոտերի բռնկման արդյունքում հրդեհների առաջացումը, որը լրջագույն խնդիր կարող է առաջացնել համայնքի համար: Բացի այդ, կայանները կատարվում են բջջային կապի միջոցով և կրակի հրաման արձակելիս՝ երբեք չես իմանա, թե արդյոք կայանի տարածքում մարդ (երեխա) կամ ընտանի կենդանի կա թե ոչ: Ուստի տեխնիկական բնութագրի 1.12 և 1.3 կետերը հստակ և օրենքի տառին համապատասխան՝ սահմանում են վերը նշված անվտանգ կառուցվածքի կայանի բնութագիրը, հնարավորություն տալով բոլոր այն արտադրողներին, որոնք ունեն նման չափանիշներին համապատասխանող կայան մասնակցել Ընթացակարգին:

Ինչ վերաբերում է հիմքի կառուցմանը (1.14 կետ), ապա Պատվիրատուն նշել է, որ չոր եղանակով հիմքի տեղադրումը համարվում է ժամանակավոր կառույց և ցանկացած ժամանակ անհրաժեշտության դեպքում կարող ենք այն տեղափոխել, կապված տվյալ տարում համայնքի առաջնահերթ մշակովի վարելահողերի տեղաբաշխման հետ: Իսկ ինչ վերաբերում է բետոնի սալի պարամետրերին Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ-ում տեղակայված բոլոր հակակարկտային կայանների հիմքում դրված է ամբողջական գործարանային արտադրության սալ, որը անհրաժեշտ է կայանի հուսալի աշխատանքի և հնարավոր տեղափոխման համար:

1.15 կետի վերաբերյալ Պատվիրատուն հայտնել է, որ պահանջվել է կայանների հողանցում, որը գազով լիցքավորված սարքերի դեպքում պարտադիր պայման է կայծակներից պաշտպանվելու նպատասկով, ինչպես նաև կայանների գործունեության ընթացքում անվտանգ շահագործման վերաբերյալ (այդ թվում թռչող օբյեկտների վրա անցտանգ ներազդման և Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից հաստատված «տեխնիկական պայմաններ») փաստաթղթերի առարկություն, որը անշեղորեն բխում է որակյալ և անվտանգ գնում կատարելու նպատակից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ վերջինիս կողմից որևէ արհեստական արգելք չի ստեղծվել հնման գործընթացին որևէ հնարավոր մասնակցի մասնակցության համար և ամենը օբյեկտիվորեն հիմնավորված է գնման առարկայի առանձնահատկություններով: Բացի այդ, Պատվիրատուն նշել է նաև, որ վերջինիս կողմից ուսումնասիրվել է ՀՀ Շիրակի մարզում եղած նմանատիպ վեճերը, որոնք քննվել են գնումների բողոքարկման խորհրդի կողմից, մասնավորապես՝ ԳԲԽ-85/16, գործի քննության ընթացքում արձանագրվել է, որ պատվիրատուներին անհրաժեշտ է եղել այն ապրանքը ինչը, որ պահանջվել է հրավերով, ուստի ՀՀ Շիրակի մարզի Հովտաշենի գյուղապետարանը խնդրել է «Լոկատոր» ՓԲԸ-ի 01.03.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

3. ԳԲԽ-26/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-26/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ Շիրակի մարզի Հովտաշենի գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպվել է «ՇՄՀԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածի՝ պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիրը սահմանվել է հետևյալ ձև.

Գնման առարկա՝ ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը
Հակակարկտային կայան	1.Կայան 1.1 Պաշտպանվող տարածքը՝ 100-120 հա 1.2 Հարվածային ալիքների գեներացման պարբերությունը՝ ոչ ավել քան 6 վրկ 1.3 Հարվածային ալիքի գեներատորի պատերի պողպատե թիթեղի հաստությունը՝ ոչ պակաս քան 3մմ 1.4 Բռնկիչների քանակը՝ ոչ պակաս քան 2 հատ 1.5 Էլեկտրասնուցումը՝ ավտոնոմ արևային մարտկոցից (լիցքավորման կարգավորիչով) 1.6 Արևային մարտկոցի հզորությունը՝ ոչ պակաս 40Վտ 1.7 Սնուցման աղբյուրը՝ կուտակչային մարտկոց 1.8 Գազի գլանանոթների քանակը և տարողությունը՝ 6 հատ 50լ/20 կգ տարողությամբ 1.9 Ներարկվող վառելիքի քանակը՝ ոչ ավել 5գ 1.10 Կրակոցների քանակը՝ ոչ պակաս 20000 հատ 1.11 Ճնշման տվիչներ՝ Առնվազն 2 հատ, որոնք պետք է տեղում ցույց տան ճնշումների արժեքները՝ ճնշման կարգավորիչից առաջ և հետո: Ճնշման կարգավորիչից առաջ տեղադրված ճնշման տվիչը պետք է առցանց ռեժիմում հաղորդի նաև գազի գլանանոթներում ճնշման արժեքը: ***1.12 Գազի չափաբաժնի ներարկումը այրման խցիկ, ինչպես նաև այրման խցիկի օդափոխությունը պետք է իրականացվի հատուկ էլեկտրական օդամղիչի միջոցով,այրման խցիկը պետք է չունենա որևէ օդափոխության մեխանիկական փական, բացառելով արտաքին բոցի առաջացում:*** ***1.13 Գազի ներարկիչը պետք է կահավորված լինի հատուկ հետադարձ փականով, բոցի հետդարձը գազաբաշխիչ համակարգ բացառելու նպատակով:*** ***1.14 Տեղակայման աշխատանքները նախատեսում են կայանի տեղակայման տարածքի հողի հարթեցում և բացառապես չոր եղանակով հիմքի կառուցում: Հիմքը պետք է լինի մեկ ամբողջական 240 սմ x 180 սմ առնվազն 18 սմ հաստությամբ երկաթբետոնե սալից, որը պետք է պատրաստված լինի 16մմ հաստությամբ ամրանից հյուսված 20սմ x 20սմ շախմատաձև 2 ցանցով, ցանցերի հեռավորությունը միմյանցից 10սմ, լցոնված B15 դասի***

բեկոնով:
Երկաթբետոնե հիմքի վրա մոնտաժվում է կայանի կարկասը, իր մեջ ներառելով կայանի բոլոր հանգույցները, այդ թվում հարվածային ալիքների գեներատորը: Կայանը և նրա հիմքը պետք է ունենա տեղափոխության հնարավորություն: Կայանը պետք է պաշտպանված լինի մետաղական ցանցով և դրա մուտքը պետք է պաշտպանված լինի կողմնակի անձանց ելումուտից:
1.15 Այլ պահանջներ
- Պետք է իրականացվի կայանի հողանցում:
- Հակակարկտային կայանը պետք է ունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:
- Հակակարկտային կայանը պետք է ունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:

2. Ղեկավարող վահանակ

2.1 Կառավարման տեսակը GSM շարժական կապ
Մարտկոցի լիցավորման խափանման դեպքում կայանը պետք է աշխատի
- 225 ժամ՝ հերթապահ ռեժիմում
- 45 ժամ՝ աշխատանքային ռեժիմում
2.2 Պետք է ունենա կայանի պարամետրերի ավտոմատ առցանց հաղորդման հնարավորություն՝ գազի ճնշման արժեք, սնուցման լարման արժեք, մարտկոցի լարման արժեք, տեղեկատվություն կապի որակի մասին:

2.3 Ծրագրային ապահովման շնորհիվ պետք է հնարավոր լինի փոխել հարվածային ալիքների գեներացման պարբերությունը, ներարկվող գազի քանակը, գազի էլ.մագնսիական փականի բաց մնալու տևողությունը, բռնկչի աշխատանքի տևողությունը:
2.6 Պետք է ունենա աշխատանքային ռեժիմների անվտանգության ալգորիթմներ.
- Հարվածային ալիքների գեներացման պրոցեսը սկսելուց առաջ պետք է տա 5 վայրկյան տևողությամբ ձայնային ազդանշան:
- Հարվածային ալիքների գեներացման ընթացքում իրար հաջորդող 4 անհաջող պայթյունի առկայության դեպքում համակարգը պետք է դադարեցնի աշխատանքը, և առցանց տեղեկատվություն հաղորդի օպերատորին:
- Կայանը չպետք է սկսի իր աշխատանքը, եթե գազի ճնշման արժեքը պակաս է սահմանված նորմատիվներից:
2.8 Ղեկավարման վահանակը պետք է տեղադրվի արտաքին ազդեցություններից պաշտպանված առանձին հերմետիկ պահարանի մեջ:

3. Կապի միջոցներ

3.1 Կապի տեսակը՝ GSM շարժական ցանց
3.2 Պետք է ունենա առնվազն 2 բջջային օպերատորի ցանցի միջոցով աշխատանքի հնարավորություն՝ հիմնական և պահեստային:Ընդ որում, պահեստային օպերատորի ցանցին անցումը իրականացվում է ավտոմատ, ծրագրային ապահովման միջոցով:

4. Հեռակառավարման ծրագրային համակարգ

Կառավարվող կայանների քանակը՝ անսահմանափակ
Տվյալների բազան՝ կենտրոնական
Համակարգի գործարկման ընթացքում չպետք է առաջանա լրացուցիչ (այլ) վճարովի ծրագրերի ձեռքբերման և կիրառման անհրաժեշտություն:
4.1 Համակարգը պետք է ունենա էլեկտրոնային գրանցամատյան, որտեղ արխիվացվում են բոլոր հրահանգները ամսաթվի և ժամի ցուցադրմամբ:
- մուտքի դռան բացման դեպքում
- մարտկոցի ցածր լարման դեպքում
- գազի ցածր ճնշման դեպքում

	- 4 հաջորդական անհաջող կրակոցի դեպքում համակարգը պետք է հաղորդագրություն ուղարկի օպերատորին: 8) Պայմանագրի ժամկետ - Սկիզբը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից: - Ավարտը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 7-րդ օրացուցային օրը ներառյալ: 9) Երաշխիք 1 տարի երաշխիք:

*Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների:

3. Ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Բարվա» ՍՊԸ-ն:

4. «ՇՄՀԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշվել է Ընթավակարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

4. ԳԲԽ-26/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 01.03.2017թ. ներկայացրած բողոքը, ՀՀ Շիրակի մարզի մարզի Հովտաշենի գյուղապետարանի 07.03.2017թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, ***արդյունավետ և օգտավետ իրականացում:***

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:*** Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը ***պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը և ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:***

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման

առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ Շիրակի մարզի Հովտաշենի գյուղապետարանի կարիքների համար հակակարտային կայանի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄՀԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) թիվ 6 հավելվածի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելված տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր), Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 4-րդ կետի և 3-րդ մասի պահանջների համաձայն, ամբողջությամբ և հստակ նկարագրվել են ձեռքբերվող ապրանքի, տվյալ դեպքում հակակարկտային կայանի հատկանիշները՝ ներառելով գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, ինչպես նաև որակին վերաբերող պայմանների հստակ և մանրամասն նկարագրությունը:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Տեխնիկական բնութագիրը կազմվել է Օրենքի պահանջների խախտումով, քանի որ գնման առարկայի տեխնիկական հատկանիշներն (Տեխնիկական բնութագրի 1.12-րդ, 1.13-րդ, 1.14-րդ և 1.15-րդ կետերը) սահմանվել են այնպիսին, որ խտրական և ոչ մրցակցային պայմաններ են ստեղծում «Լոկատոր» ՓԲԸ-ի մասնակցության իրավունքի իրացման համար:

Կենտրոնը գտնում է, որ Հրավերի Տեխնիկական բնութագիրն հստակ ձևով արտացոլում է Պատվիրատուի այն կարիքն, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ընդ որում, Ընկերության կողմից որպես Օրենքին հակասող տեխնիկական հատկանիշներ պարունակող մատնանշված կետերի վերաբերյալ Պատվիրատուի կողմից ներկայացվել են համապատասխան հիմնավորումներ, որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ նշված տեխնիկական բնութագրերով առարկայի ձեռքբերումը հիմնավորված է Պատվիրատուի օբյեկտիվ պահանջով, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Գտնում ենք, որ Հրավերի Տեխնիկական բնութագիրը կազմված է Օրենքի պահանջներին համապատասխան, որը չի խոչընդոտում կամ չի սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար մասնակցության իրավունքը և ամբողջությամբ

ու հստակ նկարագրում է ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել նաև, որ գնումը պետք է լինի տնտեսող, արդյունավետ և օգտավետ: Տվյալ դեպքում Կենտրոնը գտնում է, որ Տեխնիկական բնութագրով սահմանված գնման առարկայի տեխնիկական նկարագիրը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք առկա կարիքին, որը հանգեցնում է օգտավետ և արդյունավետ գնման:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիրն կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստի «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած բողոքը անհիմն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 01.03.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-26/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան